ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ՆՈՎՈՍՏԻ ՊԵՋԱՏ»-Ի ԹՂԹԱԿՑԻ ՀԱՐՑԻՆ

«Նովոստի պեչատ»-ի խմբագրության թղթակիցը դիմել էր Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Վազգեն Ա-ին հետևյալ հարցով.

ՀԱՐՑ.— Խնդրում ենք հայտնել Ձեր կարծիքը տիեզերքը նվաճելու և սովետական տիեզերագնացների խմբային թռիչքի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ.— ՍՍՌՄ-ում և նրա սահմաններից դուրս գտնվող բոլոր հայ հոգևորականությունը, հայ ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ, հիացած է սովետական գիտության հսկայական հաջողություններով: Տիեզերական տարածությունը նվաճելու ասպարեզում եզած հաղթանակի ուրախությունը բաժանում ենք: Երկրագնդի շուրջ «Վոստոկ—3» և «Վոստոկ—4» սովետական տիեզերանավերի պատմական նոր խմբային թռիչքները, ղեկավարված Սովետական Հայրենիքի փառապանծ կավակներ Անդրիան Նիկոլաևի և Պավել Պոպովիչի կողմից, հանդիսանում են սովետական մարդկանց հերոսական սխրագործությունը և գիտության ու տեխնիկայի խաղաղ զարգացման մեծագույն նվաճումը: Թող մարդու մտքի բոլոր նվաճումները բացառաբար ծառայեն խաղաղության և առաջադիմության:

Ամբողջ սրտով Մենք շնորհավորում ենք և օրհնում խիզախ հերոսներին՝ տիեզերագնացներ Անդրիան Նիկոլաևին և Պավել Պոպովիչին՝ բարեհաջող թռիչքի և հաջող վերադարձի համար Երկիր:

Կեցցե՛ աշխարհի խաղաղությունը:

18 օգոստոսի 1962 թ.
Էջմիածին